տանէ Պերնադովեանց, որ ի սկիզբն միաբանութեան մերոյ ընդ Հռովմայ սուրբ եկեղեցւոյն՝ ի ծնողացն յԷջմիածին առաքեցաւ, և զի զճարտասանութիւնն լաղինական ուսեալ էր ի Լէօպոլիս, թարգմանեաց քաղցր ոճով ըզ-Բուրասանն աղօթից, զմասն ինչ Հին պատմութեանն Յովսեփայ հրէի, ըզ-Դիոնեսիոսի Արիսպագացւոյն վերստին թարգմանեաց գիրսն. Նա և զգիրս Պատճառաց յ'36 պրակս, և զՀայելին վարուց։ Յետոյ բարի վարուք և ուղղափառութեամբ զկեանս իւր վճարեալ՝ հանգեաւ ի Քրիստոս, մօտ յայսմ ամի։

1686· ՌՃԼԵ· Մինաս վարդապետն Թոխաթցի Զիլիֆտար օղլու կոչեցեալն, եպիսկոպոս Պուղտանու (յորմէ ես զչորս աստիճանս առի յամի Տեառն 1680), ի դառնալն ընդ լերինս Մաճառաց, ի միզարգելութենէ՝ զոր ի բազում ամաց կրէրն՝ տանջեալ, վախճանի. Թաղի ի գերեզմանատանն Օ-լախաց. ի վերայ գերեզմանի նորա բազում անգամ ի կիրակամտի լոյս յերկնից իջանէ. զոր ականատեսք և արժանահաւատ արք տեղւոյն՝ պատմեցին մեզ։ Սա էր ճգնազգեաց, սրբակրօն, պահեցող և աղօթասէր. մինչ զի յաւենայն աւուր զութ կանոնս սաղմոսացն Դաւթի՝ անխափան ասէր. ոչ երբէք մերկանայր զհանդերձն յանձնէն, այլ նոքօք կծկտեալ ի վերայ բարձին ննջէր. ի գիշերին բազմիցս անգամ ելեալ ի մահճէն՝ սաղմոսելով շրջէր ընդ տնին իւր։ Որոյ ականատես բազմիցս ես ինքն եղէ։

Վարդան Յունանեան լուսեալ զմեռանելն Նիկողայոսի արքեպիսկոպոսին Լէօպոլսի, հնարիւք ելեալ ի Հայաստանեաց՝ գայ ի Լէօպոլիս, և տիրէ աթոռոյն, զոր ընդ ամս 29 կառավարէ բարի վարուք։ Ի սոյն ամի ընդունի յԻնոչենցիոսէ ԺԱԷն զանուն արքեպիսկոպոսի և զեմիփորոն, և ի Ս. Յովհաննէն՝ զհազար սկուտս, զորս ոչ էր առեալ իբրեւ եպիսկոպոս ընդ ամս տասն. որովք զտիպ (գրոց) գեղեցիկ կազմեաց, զոր յափշտակելով յետոյ Շվէտացն, խափանեցաւ գործ նորա։

1689· ՌՃԼԸ· Աստուածատուր վարդապետն ի Մշու Ս. Կարապետին վանաց, և Տէր Քրիստոսատուր Մնտրողն՝ աւագերէցն Սեչովու և այլք, զուղղափառ հաւատոյ դաւանութիւն արարին առաջի Գեր. Վարդանայ Յունանեան արքեպիսկոպոսին մերոյ ի Լէօպոլիս, գոլով իմ ներկայ, փետրուար ամսոյն։

Սիւնհոդոս արարին մերայինքս ի Լէօպոլիս, հոկտ. 10, վերակացու գոլով Գեր. Տէր Նունցիոսն Կանդելմի և Վարդան արքեպիսկոպոսն, վասն սրբագրելոյ զՊատարագատետրն, և այլն. որոյ աղագաւ առաքեցաւ ի Հռովմ Աստուածատուր եպիսկոպոսն Ներսէսեան։

1690· ՌՃԼԹ· Մովսէս վարդապետն և եպիսկոպոս Երեւանցի, երկիցս զմեծ նուիրակութիւնս Էջմիածնի արար. եկն ի Լէօպոլիս, յունվարի 25, և